ՀԲԸՄ նախաձեռնությամբ գործող «Անդրանիկ» սկաուտական ճամբարը իր հետաքրքիր եւ ուրախ օրերով նաեւ ինքնուրույնության, տնտեսվարության, հնարամտության, համարձակության, վստահության ձեւավորման եւ զարգացման իսկական դարբնոց դարձավ աշխարհի տարբեր երկրներից ժամանած եւ իրենց երկշաբաթյա հանգիստն այստեղ անցկացրած հայ պարմանների եւ պարմանուհիների համար:

Հուլիսի 13-ից 25-ը «Անդրանիկ» սկաուտական ճամբարի կյանքին ընդգրկվեցին 22 հայ երիտասարդներ Թբիլիսիից, Քվեմո Քարթլիից եւ Սամցխե-Ջավախքից: Վիրահայոց ջոկատի առաջնորդն էր Մարինա Խաչատուրովան:

[illegible]